

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՔԱՂԴԱՍԱԳԻՐՔ

355.51

4-35

16259

Գլ. Ուիժ VII

ԱՐԱՐԱՐԱՆ

1932

355.51

4-35

1/8

1007 2050 23256-60
31635

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՔԱՂԴԱՍԱԳԻՐՔ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ)

ԳԼՈՒԽ VII

2010

ՅԵՐԵՎԱՆ

1982



ԳԵՏՆՐԱՏԻ ՏԳԱՐԱՆ

Դրամ 6992 (Բ)

Գառվեր 181

Տիրամ 3000

002

ԴԼՌԻԽ 7-ԲԳ

ՀԱՄԿՈՄԿՈՒՍ (Բ)

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԸ (Բ) ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՎՈՐ
ՋՈԿԱՏՆ Ե

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՎՈՐ ԴԵՐԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԽՍՀՄ համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրի-
գադն է: Մեր յերկրում աշխարհի մեջ առաջին անգամն է սոցիա-
լիզմ կառուցվում: Մեր սոցիալիստական շինարարությունը դեկա-
վարը, բոլոր աշխատավորների առաջնորդը հանդիսանում է բան-
վոր դատակարգը, վորովհետև նա յե ժամանակակից հասարակու-
թյան ամենից կազմակերպված, ամենից գիտակից և առաջավոր
դատակարգը, ամենից հեռեդղական հեղափոխական դատակարգը:

Բանվոր դատակարգն առաջատար դեր է կատարում հեղափո-
խության ու սոցիալիստական շինարարության մեջ, վորովհետև
բուրժուական հասարակարգի պայմաններում նա հանդիսանում
է ամենից ճնշված դատակարգը և նրա համար չկա կարիքից ու
ստրկությունից ալ յեղը, քան կապիտալիզմի վոչնչացումը: Բան-
վորներն իրենց ձեռքով կառուցել են Փարբիկներն ու գործարան-
ները, յերկաթուղիներն ու քաղաքները, սանդեկ են ձեռնադույն
հարստություններ, բայց այդ հարստությունները բուրժուական
հասարակարգի որոք պատկանում են կապիտալիստների դատա-
կարգին: Պրոլետարները չունեն վոչ մի օեփականություն, բացի
իրենց բանվորական ձեռքերից, և այդ պատճառով նրանք չահա-
գրդոված չեն արտադրության մեջոյների մասնավոր կապիտա-
լիստական սեփականություն պահպանման մեջ:

Դրա հետ միասին ինքը՝ կապիտալիստական արտադրությունը,
համախմբելով բանվորներին գործարաններում ու Փարբիկներում,
նրանցից ստեղծում է կազմակերպված հասարակական ուժ: Պրո-
լետարիատն իր պայքարի փորձով (գործադուլներ, ապստամբու-
թյուններ) ուրիշներից ամելի լավ և ավելի շատ է պատրաստված
կապիտալիզմի դեմ վճռական մարտերը ղեկավարելու համար:

Միայն բանվոր դատակարգն է ընդունակ գլխավորել իր ազա-
տագրման և բոլոր աշխատավորներին կապիտալիստների ու կա-
վածատերերի լծից ազատագրելու համար մղվող պայքարը:

Միայն բանվոր դասակարգն է ընդունակ զլիսավորելու նոր սոցիալիստական հասարակության շինարարությունը:

Բանվոր դասակարգը միատարր չէ իր կազմով:

Պրոլետարիատի հիմնական մասան կապիտալիստական յերկրներում կազմում են կապրային բանվորները, վորոնք իրենց ամբողջ կյանքում աշխատում են գործարանատիրոջ ու ֆաբրիկանտի համար, վորոնք չունեն վոչ մի սեփականություն և ապրում են միայն աշխատավարձով: Այս, այսպես կոչվող սոսմական բանվորները կազմում են հեղափոխության գլխավոր ուժը: Նրանք մյուս բանվորներից ավելի լավ են հասկանում իրենց շահերի անհատական լիակցությունը գործարանատերերի շահերի հետ, նրանք անցել են դասակարգային դաժան պայքարի շիջան, նրանք իրենց լավագույն մասին տալիս են բանվոր դասակարգի կուսակցությանը:

Մի այլ մասը նոր բանվորներ են, վորոնք նոր են յեկել գյուղից, քայքայված անայնադործներ են, արհեստավորներ ու մանր առևտրականներ, վոր միայն նոր են ընդունվել ֆաբրիկներն ու գործարանները: Այդ բանվորները տակավին վերջնականապես չեն խզել իրենց կապերը մանր-սեփականատիրական անցյալի հետ: Նրանք յենթակա յեն տատանումների, ամեն անգամ չեն համատուժ իրենց սեփական ուժերին, իրենց դասակարգի ուժերին և հույս ունեն փայ ստանալու կապիտալիստներից: Բանվորները այդ մասով մեջ յերբեմն աղգային ու մանր-սեփականատիրական նախադրաչարումները գերակշռում են բանվոր դասակարգի ընդհանուր շահերի հանդեպ:

Վերջապես՝ կա նաև բանվորների վարժված, արտադրության մեջ փորձված վերնախավ, վորը կաշառվում է կապիտալիստների կողմից բարձր աշխատավարձով: Վիթխարի շահույթներ ստանալով, բուրժուազիան այդ շահույթների մի փոքր մասը հատկացնում է բանվորների վորոշ մասին բարձր ուժիկներ տալուն: Այդ բանվորների մի մասը հանդիսանում է իր տերերի գործակալները բանվորների մեջ և պաշտպանում է ֆաբրիկանտների շահերը, զորքադավ իրենց դասակարգային յեղբայրների դեմ:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՊԱՀՆ Ե

Բանվորներին, վորոնք միանման չեն իրենց գիտակցությանը, բայց միանալիս են իրենց դասակարգային դրությամբ, կարող են համախմբել և ուղղել դասակարգային ուղիով միայն բանվոր դասակարգի լավագույն մասի կազմակերպությունը՝ կուսակցությունը: Կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի առաջավոր, ամենադիտակից մասն է: Կուսակցությունը պարզ գիտակցում է իր դասակարգի շահերը, ղեկավարում է նրա պայքարը, ուղղություն է տալիս նրա հեղափոխական կամքին:

Ինչպես բանակը չի կարող կռվել ու հաղթել առանց փորձա-

տան շտաբի, այնպես էլ պրոլետարիատը չի կարող տալալել բուրժուազիային իշխանությունը և սոցիալիզմ կառուցել առանց կուսակցության: Կուսակցությունը ղեկաված է առաջավոր հեղափոխական թաղաքարի որենքները: Նա կարողանում է բանվորների ժամանակավոր ու մասնակի շահերը յենթարկել պրոլետարական համադասակարգային շահերին: Նա կարողանում է ընտրել պայքարի հաջողության համար նպաստավոր մոմենտներ և նշել այդ պայքարի միջոցները: Կուսակցությունը դասակարգի ուղեղն է: Կուսակցության ուժը նրա պահանջների պարզ ու վորոշակի ծագքի, յերկաթե կարգապահության և մասսաների հետ ունեցած ամուր կապի մեջ է: Համախմբելով ամենից գիտակից, տոկուն բանվորներին, կուսակցությունը հաջողությամբ ղեկավարում է պրոլետարիատին՝ իշխանության համար մղած մարտերը, ղեկավարում է իշխանությունը գրավելուց հետո սոցիալիզմի շինարարությունը:

Ինչու՞ բանվոր դասակարգին կուսակցություն է պետք:

Ինչու՞ կոմունիստական կուսակցությունը հանդիսանում է բանվոր դասակարգի ավանգարդը:

ՍՈՑԻԱԼ-ԶԱՇԽՍՆԵՐԸ ԲՈՒՐժՈՒԱԶԻԱՅԻ ԱՐԵՆՏՈՒՐԱՆ ԵՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Վոչ բոլոր կուսակցությունները, վոր իրենց բանվորական են անվանում և իրենց շարքերում բանվորներ ունեն, իրոք մարտնչում են բանվոր դասակարգի շահերի համար:

Մեղլիայի, այսպես կոչվող «բանվորական կուսակցությունը», վորը յերկու տարուց ավելի իշխանության գլուխ եր անցել, ոգնում է կապիտալիստներին՝ թալանելու բանվորներին, կրճատելու աշխատավարձը, յերկարացնելու բանվորական որը, ղրկելու բանվորներին գործադրկության նպաստից: Գերմանական սոցիալ-դեմոկրատները, վորոնք իրենց պրոլետարների կուսակցություն են անվանում, ճնշեցին 1918 թվին պրոլետարական հեղափոխությունը, բանվորների արյան ծովի մեջ յեղդելով հեղափոխությունը, և հետագա տարիներում մինչև մեկ որերը ներառյալ ակտիվ մասնակցում են բանվորներին ճնշմանն ու կոլոպոմանը:

Ռուսական մենչևիկները նույնպես իրենց բանվորական կուսակցություն են անվանում: Բայց մենք գիտենք, վոր նրանք ոգնում է յին հակահեղափոխական գեներալներին՝ պայքարելու բանվորների ու գյուղացիների իշխանության դեմ քաղաքացիական պատերազմի տարիներում: Նրանք դեռ նորերս ՍՄԶՄ մեջ կազմակերպել է յին թորհրդային իշխանության տապալման և բուրժուազիայի իշխանություն հաստատելու համար կազմակերպություն: Նրանք խուս՝ մեկ է յին անում ոտաբերկրյա կապիտալիստների հետ՝ հարձակվելու աշխարհիս առաջին պրոլետարական պետության վրա:

Մենչեիկյան սոցիալ-դեմոկրատական կուսակցութեանը բանվոր դասակարգի ու բոլոր աշխատավորների շահերին դժգոհ-
 ճանողների կուսակցութեանը են: Նրանք ոգնում են բուրժուա-
 դիային ճնշելու իրենց յերկրներում ու կապիտալի գաղութներում
 պրոլետարներին ու գյուղացիներին: Նրանք ֆաշիստական օկուպա-
 թիան ծառայութեան մեջ են գտնվում միևնույնների ու ժողովրդա-
 ների պաշտոններով: Նրանք ձգտում են ամրացնելու կապիտա-
 լիստական օկուպութեան կորույրը և հանգիստանում են բուրժուադիայի
 գլխավոր հենարանը համաշխարհային հեղափոխական շարժման
 դեմ մղած պայքարում ու ՍՍՀՄ դեմ ինտերվենցիայի պատրաս-
 տութեան մեջ, նրանք ֆաշիզմի անմիջական ոգնականներն են,
 նրանք հանդիսանում են սոցիալ-ֆաշիստներ:

Միայն կոմունիստական կուսակցութեանը և կազմակերպում
 բանվոր դասակարգին ու բոլոր աշխատավորներին և ճնշված ալ-
 դություններին՝ տապալելու համար կապիտալիստական լուծն ու
 շահագործումը: Միայն նրանք են հետևողականորեն և հաստա-
 տապես պաշտպանում ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղա-
 ցիների կենսական շահերը: Միայն կոմունիստներն են իրոք առաջ-
 նորդում աշխատավորներին դեպի սոցիալիզմ՝ պրոլետարիատի
 դիկտատուրայի միջոցով, դասակարգային թշնամու դեմ անհաշտ
 պայքարի միջոցով:

Ուլֆե՞ր են սոցիալ-ֆաշիստները և ինչո՞ւ յեմ նրանք բանվոր
 դասակարգի թշնամիները:

Ինչո՞ւ բանվորներն ու բոլոր աշխատավորները պետք է գիտն
 միայն կոմունիստների հետևից:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՅԵՎ
 ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆ Ե ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՒ
 ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բոլոր յերկրների կոմունիստական կուսակցութեանները մեջ
 Համամիութենական կոմունիստական (բայշևիկներին) կուսակ-
 ցութեանը, — Համակոմկուսը (բ), — ամենից փորձված, ամբողջապես ու
 կոմպլած կուսակցութեանն է: Նա ներկայումս համախմբում է իր
 շարքերում յերկու և կես միլիոնից ավելի անդամ ու թեկնածու:

Այդչափ բազմամարդ մեր կուսակցութեանը յերբեք չի յեղել:
 Նա անցել է ցարական միապետութեան, կապիտալիստների ու կալ-
 վածատերերի դեմ դժգոհ պայքարի բազմամյա ուղի, աշխատելով
 բանվորների մեջ կառավարութեանից դադանի: Չնայած ցարի,
 կալվածատերերի ու կապիտալիստների բոլոր հետապնդումներին,
 կուսակցութեանը զանազան քաղաքների գործարաններում ու ֆաբ-
 րիկներում կազմակերպել է բլիշներ, հրատարակել է թերթեր ու
 դրքեր, ամենուրեք հավաքել է դադանի ժողովներ, կազմակերպել
 է գործադուլներ, ցույցեր և ապստամբութեաններ և կարգապահ
 է մեր յերկրի բանվոր դասակարգին հասցնել հեղափոխական մե-
 ծադույն հաղթանակների:

30—40 տարի առաջ ուսական հեղափոխականների շարքերը
 սակավամարդ էլին, ինչպես և համեմատաբար սակավաթիվ էր և
 բանվոր դասակարգը: Միայն արդյունաբերութեան դարգացու-
 մով, հեղաշեռն, յերբ աճում է բանվոր դասակարգը, սկսում են
 աճել և բանվոր դասակարգի քաղաքական հեղափոխական կազմա-
 կերպութեանները: Առանձին, ամբողջ յերկրով մեկ ցրված բան-
 վորական կազմակերպութեանները հետագայում համախմբվեցին
 ու կազմեցին կուսակցութեանը, վրեր կոչվեց «Խուստոստանի Սո-
 ցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցութեան» (ԽՍԴԻԿ):

Սոցիալիստական կուսակցութեանը և կոչվում էր պատճա-
 ուով, վրեր նա ձգտում էր կազմակերպել սոցիալիստական հասա-
 րակութեանը: Դեմոկրատական—վրովհեռն նա ձգտում էր նվա-
 ճել ժողովուրդների համար դեմոկրատական իրավունքներ (խոս-
 քի, մամուլի ու ժողովների ազատութեաններ, աշխատի կառավա-
 րութեան կազմակերպում, վրեր պատասխանատու լինել ժողովրդ-
 դական ներկայացուցչութեան առաջ և այլն):

Կուսակցութեան ներշնչողը, կառուցողն ու հիմնադիրը Լենինն
 էր, վրեր ստեղծեց բանվորների սոաջին հետևողական—հեղափո-
 խական կազմակերպութեանը՝ «Բանվոր դասակարգի ազատագրու-
 ման համար պայքարի Պետերբուրգյան Միութեան», վրեր իր հե-
 ղափոխական գործունեյութեան առաջին իսկ սրերից կոչ էր անում
 բանվորներին ստեղծել իրենց կուսակցութեանը:

1903 թվին, 1905 թվի հեղափոխութեան նախորելին, կուսակ-
 ցութեանը պառակտվեց յերկու մասի՝ բայշևիկներին ու մենչեիկ-
 ներին: Բայշևիկները Լենինի գլխավորութեամբ ներկայացնում էլին
 կուսակցութեան հեղափոխական—պրոլետարական լավադույն մա-
 սը, վր կանգնած էր հեղափոխական մարտական դիրքերում: Իսկ
 մենչեիկներն արտահայտում էլին բանվորների հետամնաց խավերի
 սրամաղրութեանները, վախենում էլին հեղափոխական պայքարից
 և կոչ էլին անում բանվոր դասակարգին համաձայնութեան դարու
 բուրժուազիայի հետ:

Ինչպե՞ս կազմվեց բայշևիկներին կուսակցութեանը:

ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐՆ ՈՒ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԸ 1905 թվի
 ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Լենինն ու բայշևիկները դեռ 1905 թվի հեղափոխութեան նա-
 խորելին անհրաժեշտ էլին համարում պատրաստել բանվոր դասա-
 կարգին ու գյուղացիական մանասներին գլնված պայքարի բնողեմ
 դասակարգային թշնամու: Այդ պայքարի կազմակերպիչն ու գե-
 կավարը (հեգեմոնը) բայշևիկները համարում էլին բանվոր դա-
 սակարգին, վրեր սետք է կատարել հեղափոխութեանը դաշնակ-
 ցած աշխատավոր գյուղացիութեան հետ: Տաղարիլ ցարիզմը, իսկ

հողը կալվածատերից և հանձնել այն գյուղացիութանը, վաչքն-
չացնել ճորտատիրական կարգերը յերկրում, իսկ անհատական չքա-
վորագույն գյուղացիութան անհատական շահերը հաստատել բանվոր-
ների և աշխատավոր գյուղացիների իշխանութիւնը և ապա ընթա-
նալ ղեպի նորանոր հաղթանակներ, դեպի պայքարը սոցիալիզմի
համար՝ անմիջապէս ղեպի սոցիալիստական հեղափոխութիւն:
Ահա այն ծրագրերը, վոր նշել ելին բայլէիկները:

Այլ դիրք ելին բռնել մենչեիկները: Նրանք պնդում ելին, վոր
ցարիզմի դեմ մղած պայքարում գլխավոր դերը պետք է պատկանի
բուրժուազիային, վոր այդ պատճառով բանվորները պետք է օ-
մէն կերպ լսեն բուրժուազիային և ողնեն նրան նրա դործողու-
թիւններում: Մենչեիկները (վորոնց թվում և Տրոցկին) գյուղա-
ցիութան վրա նայում ելին, վորպէս պրոլետարիատի թշնամիների
վրա: Նրանք գտնում ելին, վոր գյուղացիութիւնը չի կարող լինել
բանվոր դասակարգի դաշնակիցը և դուրս կգա հեղափոխութեան
դեմ: Մենչեիկները դեմ ելին պրոլետարիատի սպառնալիքները և
զինված ապստամբութեան պատրաստութեանը: Մենչեիկների գեր-
բը համապատասխանում էր բուրժուազիայի շահերին:

Մենչեիկների միջոցով բուրժուազիան իրագործում էր իր ազ-
դեցութիւնը պրոլետարիատի վրա:

Առանձնապէս վառ կերպով այդ հաստատուեց իմպերիալիստա-
կան պատերազմի տարիներում: 1917 թվի հեղափոխութեան փա-
ռաճակ և Հոկտեմբերից հետո, յերբ մենչեիկները դարձան բուր-
ժուազիայի գլխավոր ծառաները: Նրանք մտան Դենիկինի, Կոչա-
կի, Վրանդեի հակահեղափոխական բանակների շարքերը և միջա-
դային իմպերիալիստների ու ռուսական սպիտակ-գլարդիական-
ների ցուցումներով զենքը ձեռքներին կռւում ելին Պորհրադի
իշխանութեան դեմ:

Վստաքնալով Պորհրադի յերկրից և թաղնալով պրոլե-
տարական պատժիչ մարմինների ձեռքից, մենչեիկները մնացորդ-
ները ներկայումս հանդիսանում են միջազգային բուրժուազիայի
հավատարիմ շները: Նրանք ողնում են իմպերիալիստներին կադ-
մակերպել մեր յերկրի դեմ ինտերվենցիա: Մենչեիկների գտա-
վարութիւնը 1931 թվի մարտ ամսում, պարզ կերպով մերկացրեց
նրանց հակահեղափոխական միասարարական դործունեութիւնը,
վոր նրանք անց ելին կացնում արտասահման վախճած սպիտակ-
գլարդիականների ու իմպերիալիստական սկտութիւնների գլխա-
վոր շտաբների հետ միասին:

1905 թվի հեղափոխութիւնը հանդիսացավ հեղափոխական
ուժերի պատրաստութիւնն ու ստուգումը: Չնայած նրան, վոր
1905 թվի հեղափոխութիւնն անհաջողութիւն կրեց, և միապետու-
թիւնը չնորհիվ ռուսական և մանապէս միջազգային, — ֆրան-
սական, — բուրժուազիայի անհաջողութեան մնաց յանդուռ, այնուա-
մենայնով, հեղափոխութեան ամբողջ ընթացքն ամբողջովին հա-
տատեց բայլէիկների գծի ու ղեկավարութեան ճշտութիւնը: Իսկ

ռուսական բուրժուազիան սկսեց ակտիվ մարտնչել հեղափոխու-
թեան դեմ: Աշխատավոր գյուղացիութիւնն անհաջող էր բանվոր
դասակարգի հեղափոխական պայքարին: Հեղափոխութիւնը գըլ-
խավորում էր բանվոր դասակարգը՝ բայլէիկների կուսակցութեան
յեկավարութեամբ: Հեղափոխութեան վորձը ցույց տվեց, վոր
հեղափոխութիւնը հաջողութեամբ ղեկավարել և գլխավորել այն
կարող է միայն բանվոր դասակարգն իր բայլէիկյան կուսակցու-
թեամբ:

Այդ շրջանում, 1905 թվի հեղափոխութեան հնոցում վերջնա-
կանապէս կազմվեց բանվոր դասակարգի դաշինքն աշխատավոր
գյուղացիութեան հետ՝ պայքարելու համար ընդհանուր թշնամու
դեմ — կալվածատիրական — բուրժուական հասարակարգի դեմ:

Ինչպիսի դեր խաղացին տարբեր կուսակցութիւններն ու
դատակարգերը 1905 թվի հեղափոխութեան մեջ:

ԲԱՅԼԵՆԵՐԻՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՀԵՂԱՓՈՒՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1905 թվից հետո սկսվեց ցարական կառավարութեան դաժան
«դատաստանը» հեղափոխական բանվորների ու գյուղացիների դեմ:
Սկսվեցին մահապատիժներ, ձերբակալութիւններ և աքսորներ:
Հակահեղափոխութեան գլխավոր հարվածներն ուղղված ելին բան-
վոր դասակարգի ու նրա բայլէիկյան կուսակցութեան դեմ: Չնա-
յած կրած ծանր կորուստներին, կուսակցութիւնը շարունակում
էր իր աշխատանքը՝ պրոլետարիատի կազմակերպման և նոր հաղ-
թանակների պատրաստման համար:

Արդեն 1912 թվին սկսվեց հեղափոխական շարժման նոր վե-
րելքը: 1914 թվի ամռանը հեղափոխական շարժման ալիքը բարձ-
րացավ առանձնապէս բարձր: Կուսակցութեան ղեկավարութեամբ
Պիտերի, այժմյան Լենինգրադի բանվորները նորից կառուցում
են բարիկադներ, բռնում են ցարիզմի դեմ բացահայտ պայքարի
ուղին: Սակայն հեղափոխական պայթիւն չառաջացավ: Նա կա-
սեցված էր իմպերիալիստական պատերազմով:

1914—1917 թ. թ. պատերազմի սկզբից մենչեիկներն սկսեցին
կոչ անել բանվորներին՝ պաշտպանելու կալվածատերերի ու բուր-
ժուազիայի հայրենիքը: Միայն բայլէիկներն ելին ասում բանվո-
րին ու գյուղացուն պատերազմի մասին ճշմարտութիւնը: Չնայած
դաժան հալածանքներին, բայլէիկներն ապացուցում ելին բան-
վորներին և բոլոր աշխատավորներին, վոր այդ պատերազմը մղը-
վում է իրենց դասակարգային թշնամիների՝ կալվածատերերի ու
կապիտալիստների շահերի համար: Բայլէիկները Վենիի գլխա-
վորութեամբ կոչ ելին անում բանվորներին իմպերիալիստական
պատերազմը վերածել պատերազմի ընդդեմ ցարի, կալվածատե-
րերի ու բուրժուազիայի, դարձնել ցարից ստացած զենքը միա-
պետութեան դեմ:

Մենչեիկները հետ եր քննարկում և Տրոյեկին, վորն իրեն ձե-
վացնելով պատերազմի հակառակորդ, միևնույն ժամանակ խու-
սով դուրս եր գալիս բայլչեիկյան լոգունդները դեմ և աղբյու-
րով գործով ոգնում եր մենչեիկներին: Մենչեիկները վարձադիմն
իմպերիալիստական պատերազմում վերստին ցույց տվեց բան-
վորներին ու դյուղացիներին, վոր մենչեիկները գործում են կու-
պիտալիստների ու կալվածատերերի ոգտին:

Ինչպե՞ս ելին բայլչեիկները պայքարում իմպերիալիս-
տական պատերազմի դեմ:

ՓԵՏՐՎԱՐԻՑ ՄԻՆՁԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐ

Պատերազմը տևում եր արդեն մոտ յերեք տարի: Ժողովրդա-
կան մասսաները տառապում ելին սովից, քայքայումից ու չքա-
վորութունից, վոր ուժեղանում եր ամենամիտ: Ժողովրդական
անտեսութունը դանդում եր կատարյալ քայքայման մեջ: Հար-
յուր հաղարավոր մարդիկ կոտորվում ելին մարտադաշտերում
կամ դառնում ելին անոգնական հաշմանդամներ: Բանվորներն ու
դյուղացիներն սկսում ելին ավելի ու ավելի պարզ հասկանալ, վոր
պետք ե վերջ տալ արյունալի սպանդին, վոր հարկավոր ե տա-
պալել պատերազմի հանցավորների ու կազմակերպիչների,—ցա-
րի, կալվածատերերի ու կապիտալիստների,—իշխանութունը:

1917 թվի փետրվարին (հին տոմարով) Ժողովրդի վրդով-
մունքը հասավ ծայրահեղ աստիճանի: Բանվոր դասակարգը դաշ-
նակցած աշխատավոր դյուղացիության հետ, բայլչեիկների կու-
սակցության ղեկավարությամբ տապալեցին միապետութունը:

Յարիգմը վերաբերելու յեկան յերկու կառավարություն,
յերկու իշխանութուն — ժամանակավոր կառավարությունը
(բուրժուական) և բանվորների ու ղեկավարների պատգամավոր-
ների խորհուրդը (բանվորների ու դյուղացիների կառավարու-
թյուն): Ժամանակավոր կառավարությունը մնում եր միայն բան-
վորների ու ղեկավարների պատգամավորների խորհուրդների մեն-
չեիկյան-եսերյան աջակցության շնորհիվ, վորոնց վրա ազդեցու-
թյուն ելին ստացել մենչեիկներն ու եսերները: Ժամանակավոր
կառավարությունը խորհուրդների կամքի հակառակ չեր կարող
կարգադրություններ անել վոչ բանակում, վոչ միլիցիայում, նա
հենարան չունեի մասսաներում: Ամբողջ սպառազինված ուժը յե-
թարկվում եր յերկրորդ իշխանությանը՝ բանվորների ու ղե-
կավարների պատգամավորների խորհուրդներին, բանվորների ու
դյուղացիների իշխանությանը:

Բայց խորհուրդները չեյին ոգտվում իրենց իշխանութունից,
վորովհետեւ նրանք գտնվում ելին մենչեիկների և եսերների ձեռ-
քում, վորոնք դաշնակցել ելին բուրժուազիայի հետ: Հենվելով
մենչեիկների ու եսերների վրա, ժամանակավոր կառավարու-
թյունն ոգտագործում եր մենչեիկական-եսերական խորհուրդնե-

րը՝ անցկացնելու համար բուրժուական-կալվածատիրական քա-
ղաքականությունը բանվորների ու դյուղացիների շահագործման
ու իմպերիալիստական պատերազմի շարունակման նկատմամբ:

Այդպիսով, Փետրվարյան հեղափոխությունը կատարեց գործի
մի մասը միայն՝ նա տապալեց ցարիզմին, բայց իսկական աղա-
տադրում չբերեց բանվորների ու դյուղացիների համար: Այդ
պատճառով հեղափոխության առաջին իսկ օրերից բայլչեիկները
լենինի ու նրա անմիջական ղեկավար Ստալինի ղեկավարությամբ
սկսեցին ծավալել պայքարը՝ հեղափոխությունը նոր, բարձրա-
դույն աստիճանի վրա փոխանցելու, պայքարը բուրժուական կա-
ռավարության դեմ, իշխանությունը խորհուրդներին անցնելու
համար, սոցիալիստական հեղափոխության համար: Բայլչեիկ-
ները պարզաբանում ելին բանվորներին ու դյուղացիներին, վոր
միայն իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքն անցնելը, մի-
այն պրոլետարիատի ղեկավարության բնույթ աշխատավորներին
կապատի կալվածատերերի ու կապիտալիստների ճնշումից, կհաս-
ցնի աշխատավորներին նոր, լավագույն կյանքին, սոցիալիզմին:

1917 թվի հուլիսին Պրտերի բանվորներն ու ղեկավարները կազ-
մակերպեցին հուժկու ցույց, բողոքելով ժամանակավոր կառա-
վարության քաղաքականության դեմ և պահանջելով, վոր իշխա-
նությունը հանձնվի խորհուրդներին: Բայլչեիկները մատնանշում
եյին, վոր վճռական մարտի ժամանակը տակավին չի հասել, վոր
այլ յերկրների աշխատավորները տակավին վորոչ մտահոսություն
են առնում դեպի բուրժուական կառավարությունը, ուստի ամեն
կերպ հետ ելին պահում մասսաներին վաղաժամ յեղալիքներից:
Սակայն յերբ չհանդիմեց կանխել ցույցերը, վորովհետեւ Պրտերի
բանվորների ու ղեկավարների աստիճանի վաղաժամ յեղալիքներից:
Ինչպե՞ս և ժամանակավոր կառավարության դեմ, բայ-
չեիկներն անցան ցույցի դուրս, վորպեսզի անցկացնեն այն կազ-
մակերպված ձևով և մասսաներին դուրս բերեն մարտից նվազա-
դույն կորուստներով:

Ժամանակավոր կառավարությունը դաշնակցած մենչեիկների
ու եսերների հետ, վոր նստել ելին խորհուրդներում, գնդակա-
հարում եր հաշտություն, հող ու հաց պահանջող բանվորներին
ու դյուղացիներին, ձերբակալում եր բանվորներին և ջարդում
եր բայլչեիկյան թերթերը խմբագրատները: Սկսվեց հալածանե-
րը մեր կուսակցության դեմ: Հատուկ դատախազությամբ բուր-
ժուազիան հարձակվեց լենինի դեմ: Բայլչեիկները հայտարար-
ված ելին ղեկմանական իմպերիալիզմի գործակալներ, դերմա-
նական լրտեսներ:

Հալածանքները չկտրեցին մեր կուսակցության կամքը: Նա
չարժանահույս եր մորիլիզացիայի յենթարկել մասսաներին, վո-
րոնք որեցոր ավելի ելին համոզվում, վոր ժամանակավոր կառա-
վարության ղեկավարությունը վոչ մի լավ բան չի խոստանում
և հեռանում ելին համաձայնողական կուսակցություններից: Ա-

վերի ու ավերի յեր աճում բայլելիկների ազդեցությունը խորհուրդներում, վորտեղ նրանք պրոլետարական հեղափոխություն համար հաստատուն գիծ եյին վարում: Բայլելիկների կուսակցությունը դրոշի վրա գրված էր Լենինի լոգունդը՝ «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին, կեցցե սոցիալիստական հեղափոխությունը»: Այդ լոգունդը և դրանից բղխող բայլելիկյան այլ լոգունդները՝ հաց, հաշտություն և կարլաժատության ամբողջ հոգն անմիջապես գյուղացիներին հանձնել, — միջանի ամսվա ընթացքում նվաճեցին պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության լիակատար աշակցությունը, վորովհետև ամբողջովին անտաքցում եյին բանվորա-գյուղացիական մասսաների առորյա ձգտումներն ու իղձերը:

Այդ լոգունդները կենսագործելու համար բայլելիկները մորիլիցայի յենթարկեցին իրենց բոլոր ուժերը և 1917 թվի հոկտեմբերին, անցնելով բանվոր դասակարգի ու չքավոր գյուղացիության դրոշող գործաշունչների գլուխը, գյուղացիության լայն մասսաների աշակցությամբ տապալեցին բուրժուազիայի իշխանությունը և հաստատեցին պրոլետարական դեկտատուրա՝ խորհուրդների իշխանություն:

Այդպիսին է այն ուղին, վորով Լենինի ղեկավարությամբ մեր կուսակցությունը դարձավ աշխարհի առաջին պրոլետարական պետություն ղեկավարը:

1918 թվին մեր կուսակցությունը վերջնականապես թողեց իր՝ Թուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական (բայլելիկների) Կուսակցությունը: Մինչ այդ արդեն ամբողջ աշխարհի սոցիալ-դեմոկրատներն իրենց հայտարարել էյին բանվոր դասակարգի իսկական ղավաճաններ և բուրժուազիայի նվիրված ծառաներ: Այդ դավաճաններից սահմանադժելու համար, ղավաճաններ, վորոնք պղծել էյին սոցիալիստական դրոշը, և շեշտելու համար, վոր մեր կուսակցությունը, բայլելիկների կուսակցությունը ձգտում է հաստատել կոմունիստական հասարակարգ, Լենինի առաջարկով մեր կուսակցությունն սկսեց կոչվել կոմունիստական, — բայլելիկիկների, — կուսակցություն:

1918 թվի գերմանական հեղափոխության հետևանքը նույնպես յեղավ բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդների կազմակերպում: Սակայն խորհուրդները գլուխ անցան սոցիալ-դեմոկրատները՝ գերմանական մենշևիկները: Մենշևիկները ղավաճանեցին այդ հեղափոխությունը, կամավոր կերպով ցրեցին խորհուրդները և իշխանությունը հանձնեցին բուրժուազիային: Կոմունիստները Գերմանիայում այն ժամանակ զեռ թույլ էյին և այնքան ուժ չունէյին, վորպեսզի խորհուրդները վերածեն պրոլետարական դեկտատուրայի մարմինների: Այդ արիւնակը ցույց է տալիս, վոր առանց ուժեղ կոմունիստական կուսակցության և առանց նրա կողմից ճիշտ ղեկավարության խորհրդային իշխանության հաղթանակն անհնար է:

Ինչպե՞ս բայլելիկներն ապահովեցին բանվոր դասակարգի հաղթանակը Հոկտեմբերին:

Ինչպե՞ս չի կարող խորհուրդների իշխանություն լինել առանց Կոմունիստական Կուսակցության ղեկավարության:

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԸ (Բ) ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՆՐԱ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ Ե

Խորհուրդների գոյությունը առաջին տարիները կատարի պատերազմների տարիներ եյին՝ ուսական ու նրա թիկունքին կանգնած միջազգային բուրժուազիայի հակահեղափոխական բանակներին դեմ: Դիմադրություն ցույց տալ հակահեղափոխական դրոշներին — ահա թե ինչ էր ամենից կարևորն այդ շրջանում: Կուսակցությունն ու Լենինի ղեկավարությամբ դրա համար ստեղծվեց հուժկու Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակ:

Կուսակցությունը քաղաքացիական պատերազմի ճակատները նետեց իր բոլոր ուժերին: Կոմունիստներն ամեն բանում որինակ էյին ծառայում Կարմիր բանակի մարտիկների համար, նրանք մարտական խանդավառություն եյին ստեղծում բանակի շարքերում և համարձակ տանում էյին բանակը՝ պայքարելու միջազգային իմպերիալիզմի բազմաթիվ զինված ուժերի դեմ:

Իբ 300 հազար անդամներին կուսակցությունը ճակատներն էր ուղարկել: Նրանցից 50 հազար հոգին ընկան քաղաքացիական պատերազմի մարտադաշտերում: Տասնյակ հազարավոր կոմունիստներ հեղափոխական աշխատանք եյին տանում հակահեղափոխական զենեքախնդրի թիկունքում: Նրանցից շատերը զոհվեցին սպիտակ-գվարդիական հակահեղափոխական թաղամասերում մաթիվ տանջանքներից ու խոշտանգումներից հետո:

Կուսակցային բազմաթիվ ապստամբությունների, հակահեղափոխական ղավադրությունների, վերացման ղեկավարությունը, պայքարը միասարարության դեմ, ճակատի ապահովումը պարենով, հագուստեղենով, հանդերձանքով ու սպառազինությունով, — այս բոլորը բարդվում էյին բայլելիկների կուսակցության ուսերի վրա, վորը կաղմակերպել էր բանվոր դասակարգին գյուղական չքավորությանն ու միջին գյուղացիությանը՝ իմպերիալիստներին ու սպիտակ-գվարդիականներին դիմադրություն ցույց տալու համար:

Կուսակցությունը բանակին տալիս էր վոչ միայն սոսկական մարտիկներ, այլև առաջնորդներ ու հրամատարներ: Հանրաժանութ է այն վիթխարի գերը, վոր խաղաց քաղաքացիական պատերազմում հաղթանակի կաղմակերպման մեջ ընկ: Ստալինը: Յուրենցին, Վորոշիլովը, Ուրլանիկիձեն, Կուլերիշևը, Բուրևովը, Կիրոսով, Գամարնիկը, Յակիրը և շատ ուրիշներն ապահովեցին սպիտակ գվարդիականների և ինտերվենտների զինված ուժերի ջախջախումը, գլխավորեցին ճակատները, բանակները, դիվիզիաները:

Կարմիր բանակը հաղթող դուրս յեկավ պատերազմից: Այդ հաղթանակն ապահովված էր բանվոր դատակարգի ամուր համա- խրժրումով կուսակցության շուրջը, բանվորա-գյուղացիական դաշինքի ամրությունով, այն աջակցությամբ, վոր ցույց տվեց մեզ արտասահմանյան պրոլետարիատը, իսկ վոր գլխավորն է՝ բանակում կուսակցական ղեկավարության ամրությունը:

«Առանց յերկաթե մարտերում կոխված կուսակցության հաղթանակն անհնար էր» — ասում էր Լենինը:

Կուսակցությունը քաղաքակրթական պատերազմն ավարտելուց հետո ևս անընդհատ աշխատել է և աշխատում է Կարմիր բանակի ամրացման և խորհրդային Միության պաշտպանունակության ամրացման համար: Կուսակցության, բանվոր դատակարգի և կո- խողային գյուղացիության ջանքերով անընդհատ աճում և ամ- բողում է ԲԳԿ: մարտական կորովը:

Շնորհիվ ինչի՞ Կարմիր բանակը հաղթեց ֆալաֆաղիա- կան պատերազմում:

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային իշխանության գոյության առաջին տարիներում կուսակցության ամբողջ քաղաքականությունը, վորի թվում և տնտեսական քաղաքականությունը յենթարկված էր պրոլետարա- կան պետության պաշտպանության խնդիրներին:

Ամբողջ արդյունաբերությունը կենտրոնացված էր պետու- թյան ձեռքում: Արդյունաբերության արտադրածի հիմնական մասսան հատկացվում էր պաշտպանության կարիքներին: Բանա- կին ու բանվորներին հաց մատակարարելու համար գյուղացիները հանձնում էին մասնատրուծով: Առևտուրը փակված էր: Թղթա- դրամներն անարժեք էին դառնում և կորցնում էին իրենց նշա- նակությունը:

Քաղաքացիական պատերազմի ժամանակվա տնտեսական այդ քաղաքականությունն ստացավ «ռազմական կոմունիզմ» անունը: Նա հիմնված էր բանվոր դատակարգի ռազմա-քաղաքական դաշին- քի վրա, վոր հենվում էր չքավորագույն գյուղացիության վրա՝ գյուղացիության հիմնական մասսաների հետ: Այդ միաժամանակ անխնա պայքարի քաղաքականություն էր կուլակի դեմ՝ նրա տ- պակուլակացման հիման վրա: Այդպիսի քաղաքականությունը միակ հնարավորն էր այն պայմաններում: Նա մեզ համար ապա- հովում էր հաղթանակը քաղաքացիական պատերազմում և ժո- դովրդական տնտեսության վերականգնման խաղաղ շրջանում:

Ինչո՞ւ յեր ռազմական կոմունիզմի ֆալաֆաղիականությունն անհրաժեշտ ֆալաֆաղիականություն ֆալաֆաղիական պատե- րազմի տարիներում:

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՅՆԵԼԸ ՅԵՎ ՎԵՐԱ- ԿԱՆԳՄԱՆ ՇՐՋԱՆԸ

Իմպերիալիստական պատերազմն ավարտեց յերկրի ժողովր- դական տնտեսությունը: Քաղաքացիական պատերազմը խորա- ցրեց ավերումը: Պատերազմի ավարտումով պատերազմի տարի- ներում ավերված ժողովրդական տնտեսության վերականգնման խնդիրները, նոր սոցիալիստական հիմունքներով վերականգնման, դրվեցին կուսակցության ուղադրության կենտրոնում:

Տնտեսական նոր խնդիրները պահանջեցին փոխել տնտեսա- կան քաղաքականությունը, հրաժարվել ռազմական կոմունիզմի քաղաքականությունից: Բանվոր դատակարգի դաշինքի պահպան- ման շահերը միջակ գյուղացիության հետ նույնպես այդ էլին պահանջում: Կուսակցությունը վորոշեց անցնել նոր տնտեսական քաղաքականության — ՆԵՊ — ին:

Նոր տնտեսական քաղաքականության ռեյսերով կուսակցու- թյունը յերկիրը բերավ հասցրեց ժողովրդական տնտեսության լիակատար վերականգնմանը, վոր ավերված էր իմպերիալիստա- կան ու քաղաքական պատերազմներով, ամբարցրեց պրոլետա- րիատի սոցիալիստական դերքերը, և ավելի ամրացրեց բան- վոր դատակարգի դաշինքը գյուղացիության հետ և այդ դա- շինքում բանվոր դատակարգի ղեկավար դերը: Այսպես կուսակ- ցությունը ստեղծեց բոլոր անհրաժեշտ նախապայմանները սոցիա- լիզմի հաղթական հարձակման համար տնտեսական ճակատում:

Ինչո՞ւ կուսակցությունը ֆալաֆաղիական պատերազմը վերջանալուց հետո անցավ նոր տնտեսական ֆալաֆաղիա- կանության:

ԻՆՎՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐՊԵՍ ՍՈՑԻԱ- ԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Վերականգնելով ժողովրդական տնտեսությունը, կուսակցու- թյունը կարողացավ ընդհուպ մոտենալ պրոլետարական դիկտա- տուրայի գլխավոր խնդրին, այն և հիմնովին վերակառուցելու ամբողջ ժողովրդական տնտեսությունը սոցիալիստական հիմունք- ներով:

Դարձնել խորհրդային Միությունը բարձր-դարգացած սոցիա- լիստական ինդուստրիայի յերկիր, — այսպես վորոշեց կուսակցու- թյան 14-րդ համագումարը 1925 թվին: Կուսակցության համա- դրմարի վորոշումների հիման վրա կուսակցությունը մոբիլիզա- ցիայի յենթարկեց բանվորներին և աշխատավորներին ծավալելու արդյունաբերությունն այնպիսի տեմպերով, վոր ամենակարճ ժամանակամիջոցում հասնենք և անցնենք բուրժուական աշխարհի առաջավոր տեխնիկային և խորհուրդների յերկիրը դարձնենք ան- կախ կապիտալիստական յերկրներին:

Սկզբից մեր յերկրի արագ ինքուստրացումը,—նրա վերակառուցումը խոշոր արդյունաբերական յերկրի, դադարահաների ու մեքենաների յերկրի, չուգունի ու պողպատի, քարածխի ու նավթի, տրակտորների ու ավտոմոբիլների յերկրի:

Ի՞նչ գլխավորագույն լուրագ առաջադրեց կուսակցութեան 14-րդ համագումարը:

ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՆՑՆԵԼԸ

Ինքուստրացման հաջողութիւնները նախապատրաստեցին և ապահովեցին գյուղի ծավալուն սոցիալիստական վերակառուցման անցնելը: Կուսակցութեան 15-րդ համագումարը 1927 թվին առաջադրեց հուլիսի սոցիալիստական գյուղատնտեսութիւն ստեղծելու խնդիրը:

Ծավալեց չքավոր-միջակային գյուղացիութեան մասունների հուլիսի շարժումը դեպի կոլտոգները, վորն առանձնապէս ուժեղացավ 1929 թվին, մի թիվ, վորն ընկ. Ստալինն անվանել է «Մեծ բեկման տարի»: Այդ տարիւն վերջում ընկ. Ստալինն առաջադրեց համատարած կոլեկտիւացման հիման վրա կուլակութեան, վորպէս դասակարգի վերացման լուրջնորդը: Այդ լուրջնորդը լայնորեն ընդունվեց գյուղացիութեան բազմամիլիոն չքավոր-միջակ մասունները կողմից և բանվոր դասակարգի ղեկավարութեամբ անմիջապէս սկսեց կենսագործվել:

Գյուղը վճռականապէս թեւակոխեց զարգացման սոցիալիստական ուղին:

Ի՞նչ գլխավոր լուրագ առաջադրեց կուսակցութեան 15-րդ համագումարը:

ԽՍՀՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆ ԹԵՎԱԿՈՑԵԼԸ

Մինչև կուսակցութեան 16-րդ համագումարը (1930 թվի ամսոր) Պորհրդային Միութիւնը թեւակոխեց ՆԵՊ-ի վերջին ետապը և սոցիալիզմի առաջին շրջանը: Առանձին բնագաւառներում գործած սոցիալիզմի հարձակումից բանվոր դասակարգը կուսակցութեան ղեկավարութեամբ անցավ ծավալուն սոցիալիստական հարձակման ամբողջ ճակատով:

Սոցիալիստական արդյունաբերութեան հաջողութիւնները մինչև 16-րդ կուսամագումարը լուծեցին «ով-ու» հարցն արդյունաբերութեան մեջ հոգուտ սոցիալիզմի: Գյուղի կոլեկտիւացման բուռն թափի հիման վրա ընթանում է և մոտենում է իր ավարտմանը յերկրում կապիտալիզմի վերջին արմատների փորումը: Համատարած կոլեկտիւացման հիման վրա կիւլակութեան վորպէս դասակարգի վերացումը: Կոլտոգային շարժման աճումը փոխեց և ընդարձակեց խորհրդային իշխանութեան դասակարգային հենարանը գյուղում: Այժմ Գյուղում բանվոր դասակարգի հիմնա-

կան ու գլխավոր հենարանը հանդիսանում է կոյտնտեսական գլուղացիութիւնը: Կոյտնտեսականները ձեռք-ձեռքի տված բանվոր դասակարգի հետ սոցիալիզմ են կառուցում: Կոյտնտեսութիւնները, վոր արդեն ընդգրկել են գյուղատնտեսական տնտեսութիւնների 60 տոկոսից ավելին, իրենցից ներկայացնում են մի հուլիս ուժ, վորն ե՛լ ավելի յե ամրացնում պրոլետարական պետութիւնը: Կոյտնտեսական գյուղացիութիւնը հանդիսանում է հողագործութեան կենտրոնական դեմքը: Պորհտնտեսութիւններն ու կոյտնտեսութիւններն այժմ գյուղատնտեսական արտադրանքի հիմնական արտադրողներն են: Այդ նշանակում է, վոր այժմ լուծված է «ով-ու» հարցն արդեն նաև գյուղատնտեսութեան ասպարիզում, հետևապէս նաև ամբողջ ժողովրդական տնտեսութեան մեջ:

Կուսակցութիւնը ընկ. Ստալինի ղեկավարութեամբ բանվոր դասակարգին ու կոյտնտեսականներին առաջադրել է կարևորագույն խնդիր.—1931 թվին ավարտել սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը, վոր ուշ, քան տասր տարում հասնել ու անցնել կապիտալիստական առաջավոր յերկրներին տեխնիկական տնտեսական տեսակետից: Այդ խնդիրների կատարման համար կուսակցութիւնը մոբիլիզացիայի յե յենթարկում իր բոլոր ուժերը Պորհրդային Միութեան բանվորների և աշխատավորների ուժերը: Եւ իրագործում է աշխուրջ ղեկավարութիւնը սոցիալիստական իշխարարութեան բոլոր բնագաւառներում, նրա կարեւորագույն տեղամասերը նետելով կոմունիստների նորանոր ջոկատներ:

Վորն է կուսակցութեան ու նրա առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարութեամբ վերոհի տարիներում մեր յերկրում մեծ բերած հաջողութիւնների ելույթը:

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՈՒ ԿԿԱՌՈՒՑԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Այդպիսով բանվոր դասակարգը դաշնակցած աշխատավորների ու գյուղացիութեան հետ, վորի հիմնական մասան մտել է այժմ կոլտոգները և հանդիսանում է բանվոր դասակարգի ամուր և իսկական հենարանը գյուղում, բայց իրենցից կուսակցութեան ղեկավարութեամբ տարել է պատմական մեծագույն հաղթանակներ: Այդ հաջողութիւնները ձեռք են բերված դասակարգային թշնամու ու նրանց ոժանդակող բոլոր դուշների ոպորտունիստների դեմ մղած վճռական մարտում: Այդ հաջողութիւնները հանդիսանում են կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեան ճշտութեան անհերքելի ապացոյցը: Կուսակցութեան ու նրա առաջնորդի, Լենինի գործի շարունակողի, ընկ. Ստալինի ղեկավարութեամբ, համաշխարհային պրոլետարիատի աջակցութեամբ

ԽՍՀՄ բանվոր դասակարգին ու աշխատավորները կառուցում են և կկառուցեն սոցիալիզմ:

Ինչո՞ւ և հաստատվում կուսակցության ղեկավարությամբ ռյուսթյունը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅԲԱՐԸ ՅԵՐԿՈՒ ՃԱԿԱՏՈՎ ԼԵՆԻՆՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ՀԱՄԱՐ

Բայց լեհիզմի ամբողջ պատմությունը Լենինի ու նրա աշակերտների պայքարի պատմությունն է ընդդեմ բուրժուազիայի փորձերի, վորով վերջինս ուզում էր փաթաթել իր տեսակետները բանվոր դասակարգին ու նրա կուսակցությանը: Բայց լեհիզմի կուսակցության ամբողջ պատմությունը համակված է յերկու ճակատով՝ ոպորտունիզմի դեմ մղած պայքարով, ընդդեմ բացահայտ աջ ոպորտունիզմի, ընդդեմ «ձախ» Փրազների քողարկված ոպորտունիզմի, ինչպես նաև հաշտվողական փորձերի՝ ծածկելու, սքողելու կուսակցության գլխավոր գծից կատարած թեքումները:

ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ՈՒԺԸ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ, ԱՄՐԱԿՈՒՌՈՒԹՅԱՆ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ Ե

Կուսակցության ուժը նրա շարքերի միասնության, ամրակուռության ու յերկաթե կարգապահության մեջ է: Լենինն ասում էր. ով թեկուզ փորձե չափով թուլացնում է պրոլետարիատի կուսակցության յերկաթե կարգապահությունը (մանավանդ նրա ղեկատուության ոլորը), նա փաստորեն ոգնում է բուրժուազիային պրոլետարիատի դեմ:

Կուսակցության միասնությունը խախտելու և նրա ներսում խմբակներ ու Փրակցիաներ, կուսակցության գծին անհամաձայն խմբավորումներ ստեղծելու յուրաքանչյուր փորձ թուլացնում է կուսակցության ուժը և ոգնում է դասակարգային թշնամուն՝ բանվոր դասակարգի դեմ մղած նրա պայքարում:

Այդ լավ է հասկանում բուրժուազիան, կուսակցության ներսում յեղած պայքարը միշտ էլ ձգտում են ոգտադործել մեր դասակարգային թշնամիները, վորոնք ուրախանում են ամեն տեսակ ոպողիցիա յերեան դալիս:

ՀԱՄԿՈՄԿՈՒՄԸ (Բ) ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՈՒ ՄԻԱԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Ե

Պրոլետարիատի ղեկատուության պայմաններում հանդուրժելի յե միայն մեկ կուսակցության գոյություն: Պրոլետարական ղեկատուության այդպիսի միակ ու միատեսակ կուսակցություն է հանդիսանում Համկոմկուսը (Բ):

Յեթե մենք թույլ տայինք վորեւ ալ կուսակցությունների գոյություն, ալդ նշանակում էր տալ դասակարգային թշնամիների կազմակերպման ազատություն, վորովհետեւ կոմունիստական կուսակցությունից բացի բոլոր կուսակցությունները պրոլետարիատի թշնամիների կուսակցություններն են:

Մեր կուսակցությունը ղեկավարում է պրոլետարական պետությունը: Յուրաքանչյուր խմբակ կամ Համկոմկուսի (Բ) ներսում Փրակցիա նոր կուսակցության սաղմեր են: Հանդուրժել մեր կուսակցության ներսում Փրակցիաներ՝ նշանակում է թույլ տալ պայքարել պրոլետարական պետության ղեկավարությունը փոփոխելու համար, թույլ տալ ոպորտունիստներին պայքար մղել խորհրդային իշխանության դեմ: Այդ պատճառով մենք չենք հանդուրժում վորեւ ալ կուսակցությունների գոյություն, հետևապես՝ և մեր կուսակցության ներսում Փրակցիաների ու խմբակների գոյություն:

Համարապես անհանդուրժելի յե Կարմիր բանակի կուսակազմակերպություններում զանազան ոպորտունիստական Փրակցիաների ու խմբավորումների գոյությունը: Այդպիսի խմբակների գոյությունը կպառակտեր ԽՍՀՄ ղինված ուժերի միասնությունը, կառաջացներ Կարմիր բանակի քայքայում ու կործանում: Այդպիսով իսկ պրոլետարիատի ղեկատուության կկորցնեք իր ղինված հենարանը: Կուսակցությունն ու բանվոր դասակարգը թույլ չեն տվել ու թույլ չեն տա յերբեք նման դրություն ԲԳԿԻ մեջ:

Ինչո՞ւ պրոլետարական ղեկատուության պայմաններում հանդուրժելի յե միայն մեկ կուսակցության, — բայց լեհիզմների կուսակցության գոյությունը:

ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԸ ԹՇՆԱՄԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ԶՆՇՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆ Ե ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ինչպես մենք արդեն գիտենք, կուսակցությունը միշտ էլ մղել է ու մղում է անհայտ պայքար ոպորտունիստական ամեն տեսակ թեքումների դեմ, վորոնք բուն են ղնում նրա շարքերում: Այդ թեքումների ազդրուն է հանդիսանում դասակարգային թշնամու աղբյուրները բանվոր դասակարգի սակավ կայուն խավերի աղբյուրները: Իսկ վորովհետեւ կուսակցությունը բանվոր դասակարգի մի մասն է, թեպետ և առաջավոր մասը, ապա ուրեմն բուրժուական այդ աղբյուրները սողոսկում են կուսակցության առանձին սակավ կոփված խավերի մեջ:

Հասկանալի յե, վոր կուսակցության վորոշ ողակներում ոպորտունիստական տատանումները մեծ մասամբ առաջանում են կուսակցության աշխատանքներում յեղած այս կամ այն դժվարությունների ժամանակ, նրա քաղաքականության մեջ տեղի ունեցող կտրուկ շրջադարձերի շրջանում: Հատկապես այդպիսի պարագայ

յամ կուսակցութեան անկայուն անդամները կորցնում են իրենց զլուխները, նենդում են դասակարգային թշնամիների գիրկը:

Այսպես, որինակ՝ 1917 թվին իշխանութեան համար մղած պայքարի վճռական մոմենտում առանձին բայլչեիկները Զինովյեի, Կամենսկի ու Ռիկովի գլխավորութեամբ դեմ էին իշխանութեանը բայլչեիկների կողմից գրավելուն և կողմնակից էին մենշեիկների ու եսերների հակահեղափոխական կուսակցութեաննների հետ համաձայնութեան:

1918 թվին, յերբ խորհրդային իշխանութեանը սպառնում էին գերմանական իմպերիալիզմի սվինները, յերբ խորհրդային իշխանութեան բախտը մագից էր կախված, Տրոցկին ու «ձախ» կոմունիստները Բուխարինի գլխավորութեամբ պայքարում էին Լենինի դեմ, գերմանացիների հետ հաշտութուն կնքելու դեմ, սպառնալիքի տակ դնելով պրոլետարական դիկտատուրայի գոյությունը:

1921 թվին յերկիրը վերապրում էր ռազմական դրութեանը խաղաղ ժամանակվա դժվարին դրութեանը: Յերկրում սով էր ու ջայթակում: Կուլակներն ապստամբութեաններ էին բարձրացնում խորհրդային իշխանութեան դեմ: Սիլակ գյուղացիութեանը տատանվում էր և այդ տատանումները փոխանցվում էին նաև պրոլետարիատի առանձին հետամնաց խավերի վրա: Այն ժամանակ կրկին հանդես գիւն կուսակցութեան մեջ զանազան ուղղվիցիոն հոսանքներ:—Տրոցկու, Բուխարինի, Մապրոնովի Փրակցիան, «բանվորական ուղղվիցիան» Շլյապնիկովի գլխավորութեամբ: Այդ հոսանքները պայքարում էին Լենինի դեմ, փորձում էին ջայթայել կուսակցութեան միասնությունը, ուղղել այն կործանարար ուղիով:

Ամեն անգամ, յերբ մենք անցնում էինք սոցիալիստական շինարարութեան նոր աստիճանին, ամենափոքր դժվարությունների ու հապաղումների դեպքում, ուղորտունիստները գրոհում էին կուսակցութեանը և ձգտում էին խախտել նրա շարքերի կարգապահությունը: Բայց կուսակցութեանը ամեն անգամ այդ բռնամարտերից դուրս եր գալիս ավելի կոխված, ամրակուռ ուժեղ: Ուղորտունիզմի դեմ մղած պայքարով վարժվում և դաստիարակվում էին բայլչեիկների նորանոր ջոկապներ:

Ինչպիսի պատճառներն են առաջացնում կուսակցութեան շարքերում ռաբուսունիստական տատանումներ:

ՏՐՈՑԿԻՉՄԸ ՀԱՍԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԱՌԱ-
ԶԱՎՈՐ ԶՈՒՍՏՆ Ե

Լենինիզմին ամենից թշնամական հոսանքը հանդիսացել է ու հանդիսանում է տրոցկիզմը: Տրոցկիզմը—այդ նույն մենշեիզմն է, միայն այն տարբերութեամբ, վոր նա դիմել է ու դիմում է հեղափոխական բառերի, վորպեսզի թաքցնի իր խկական հակահեղափոխական մենշեիկյան բովանդակությունը: Այդ հատկու-

թյան, —առերես հեղափոխականութեան, —հետևանքով տրոցկիզմը առանձնապես վտանգավոր է: Սակայն գիտակից բանվորներն միշտ ընկնում են տրոցկիզմի թակարդը, հալած յուղի տեղ ընդունելով նրա շատախոսութեանը:

Տրոցկիզմն իր ծագման հենց սկզբից (դեռ 1905 թվի հեղափոխութեանըց առաջ) կատաղի պայքար էր մղում լեհաստանի տեսակետների դեմ, մեր կուսակցութեան լենինյան դեկավարութեան դեմ, բայլչեիզմի դեմ: 1917 թվի Հոկտեմբերից առաջ Տրոցկին մտավ մեր կուսակցութեան մեջ: Սակայն արդեն շուտով պարզվեց, վոր խոսքով «բայլչեիկ» դարձած Տրոցկին գործով այդպիսին չէր: Նա փորձում էր ողտադործել կուսակցութեան մեջ իր լինելը կուսակցութեանը ներսից ջայթայելու համար: Նա ջանիցս փորձեր է արել դուրս գալ լենինիզմի դեմ: Բայց և այնպես կուսակցութեան մեջ յեղած առաջին տարիներում Տրոցկին դեռ փոքր էր չափս յենթարկվում էր կուսակցական կարգապահությանը և այդ պատճառով կուսակցութեանը համբերում էր նրան իր շարքերում:

Լենինի մահից հետո Տրոցկին վորոշեց, վոր հասել է ժամանակը բացահայտ դուրս գալու, վոր թերևս նրան հաջողվի ստիպել կուսակցութեանը չեղվելու լենինյան ճանապարհից դուրս տրոցկիզմի ուղին: Սի բուռ իր համախոհների հետ միասին կատաղի պայքար սկսեց կուսակցութեան լենինյան դժի դեմ, կուսակցութեան ընկ: Ստալինի գլխավորած դեկավարութեան դեմ: Նա ստեղծեց իր ընդհատակյա տրոցկիստական կուսակցութեանը մեր կուսակցութեան ներսում, սկսեց ալրել հակահեղափոխական թուրքիկներ ու կոչեր, փորձեց 1927 թվի նոյեմբերին կազմակերպել հակախորհրդային ցույցեր Մոսկվայում ու Լենինգրադում: Այլևս անհնար է հանդուրժել տրոցկիզմը կուսակցութեան շարքերում: Կուսակցութեանը դուրս շարտեց իր շեմքից Տրոցկուն ու տրոցկիստներին, մերկացրեց նրա հակահեղափոխական դեմքը:

Սյգւլիսով տրոցկիզմը լիովին և ամբողջովին ցած դրովեց դեպի հակահեղափոխական բանակը, դարձավ, ինչպես ասում է ընկ: Ստալինը, հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր չոկատը:

Վո՞րն է տրոցկիզմի էյութեանը:

Տրոցկիզմի էյութեանը, ինչպես ասել է ընկ: Ստալինը կուսակցութեան 16-րդ համագումարում հետևյալն է.

«ԽՍՀՄ մեր յերկրի բանվոր դասակարգի ու գյուղացիութեան ուժերով սոցիալիզմ կառուցելու հնարավորութեան թխտումը... Կյուղացիութեան հիմնական մասսաներին գյուղում սոցիալիստական շինարարութեան գործին ներգրավելու հնարավորութեան թխտումը... Կուսակցութեան յերկաթե կարգապահութեան անհրաժեշտութեան թխտումը, կուսակցու-

Թյան մեջ ֆրակցիոն խմբավորումների ազատության ընդունումը, արոցկիստական կուսակցություն կազմելու անհրաժեշտության ընդունումը»:

Տրոցկիզմի այդ տեսակետները բղխում են նրա թերահավատությունայն զննել բանվոր դասակարգի ուժերը, վոր իբր նա չի կարող իր յետևից տանել և սեյիալիզմի կողմը ներգրավել գյուղացիության հիմնական մասսաներին: Տրոցկիզմը ժխտում էր և ժխտում է բանվոր դասակարգի առումը դաշինքի հնարավորությունը միջակ գյուղացիության հետ և անխուսափելի յե համարում թշնամությունը բանվոր դասակարգի և գյուղացիության հիմնական մասսաների հետ:

Տրոցկին, ներկայումս վտարված լինելով բանվոր դասակարգի կողմից արտասահման դուրս և դալիս մեր ինդուստրացման տեմպերի ու խորհանդեսությունների ու կոլտեսուսությունների դեմ, գուշակում է խորհրդային իշխանության կործանում, զրքպարտում է բուրժուական մամուլը միջոցով կուսակցությանն ու խորհրդային Սիււթյանը: Նա հաղատում ու ճշարտությամբ ծառայում է միջադեպին իմպերիալիզմին, ամենայնուհանդերձ մասնակցություն ցույց տալով ՍՍՀՄ դեմ ինտերվենցիա պատրաստությունը:

Տրոցկիզմը խոչնդոտ է հանդիսացել սոցիալիզմի հաջող հարձակմանը: Գնթե կուսակցությունը չչախջախեր հակահեղափոխական արոցկիզմը, նրա հակամիջակային տրամադրությունները և թեւրահավատությունը դեպի սոցիալիստական շինարարությունը, կարող էին խախտել բանվորների ու գյուղացիների դաշինքի հիմքերը և այդպիսով իսկ ձախողել սոցիալիզմի հաջող շինարարությունը:

Միջադեպին ամբողջ բուրժուազիան ու յերկրի ներսում յեղած դասակարգային թշնամիները մեծ հույսեր էյին տածում դեպի արոցկիզմը: Տրոցկիստների պայքարը թեւավորում էր բուրժուազիային: Տրոցկիզմը բուրժուազիայի ձեռքը տալիս էր կուսակցության և խորհրդային իշխանության դեմ զրպարտությամբ թունավորված գեներ: Բուրժուազիան ամեն կերպ ոգնել և տրոցկիզմին կազմելու իր կազմակերպությունը, հույս ունենալով, վոր յեթե արոցկիզմը հաղթի, այդ կլինի խորհրդային իշխանության վերջը: Սակայն մեր թշնամիները չարաչար սխալվեցին իրենց հույսերի մեջ:

Տրոցկիզմի հետնորդներ հանդիսացան «ձախ» խոտորումները, վոր նկատվում էյին 1930 թվի դարնանը կոլխոզային շինարարության բնագավառում: «Ձախ» խոտորումներն արտահայտվեցին նրանով, վոր կուսակցության ու խորհրդային իշխանության տեղական մի քանի ղեկավարներ մոռացան լենինյան լոզունզը՝ միջակ գյուղացիությանը կամավոր կերպով սոցիալիստական շինարարությունը ներգրավելու մասին: Փոխանակ համոզելու միջոցով

գյուղացիներին կամավոր կերպով ներգրավելու կոլխոզները, «ձախ» խոտորումավորները սկսեցին օտիպել գյուղացիներին մտնել կոլխոզների մեջ: Նրանք հափտակվեցին տվյալ ոայոնի բոյոր գյուղացիական տնտեսություններին հարյուր տոկոսով կոլխոզներում համախմբելու նպատակով, առանդ համի առնելու առանձին ոայոնների ու մարդերի առանձնահատկությունները, այն ոայոնների ու մարդերի, փորոնք նոր եւին անոել կոլեկտիվացման ճանապարհի մրա: «Ձախ» խոտորումավորները փորձում էյին ցատկել անդնել կոլտեսուսական արտեյային ձեւի վրայով ուղղակի կոլեկտիվացման բարձրագույն ձեւին՝ կոմունային: Այդպիսի քաղաքականությունը միայն միսս էր բերում գյուղի սոցիալիստական վերակառուցմանը և ցուր էր ածում դասակարգային թշնամու ջրադադին: Ընկ. Ստայինի գեկայարությունը կուսակցությունն արագ մերկացրեղ «ձախ» խոտորումները և իսկեց «ձախ» խոտորումավորների ձեռքերին:

Վորն է հակահեղափոխական տրոցկիզմի ելուքյունը:

Ինչու է յե տրոցկիզմը համոզատում հակահեղափոխական բուրժուազիայի տաջալոր ջոկատը:

